

ՆԵՐՍԵՍ ՊԱՆԻԱՆԵՆՑԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՄԻ ՑԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Յ. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական արհավիրքների պատճառով Հայաստանը բավական երկար ժամանակահատվածներում զրկված է եղել պետականությունից: Փոխարենը, չնչին ընդմիջումներով, անհամեմատ կայուն էր հայ հոգևոր իշխանությունը՝ կաթողիկոսությունը, որ ինչ-որ շափով փոխարինել է պետական մարմիններին:

Հատկապես ուշ միջնադարյան ձեռագրերի հիշատակարաններում և փաստաթղթերում գրեթե կանոն էր դարձել որևէ օտար բռնակալի անվան հետ ժամանակի հայ կաթողիկոսի հիշատակումը: Անթվական շատ ձեռագրեր թվագրվում են իրենց մեջ անցողակի հիշատակված կաթողիկոսի իշխանության տարիներով և այլն: Այս և բազմաթիվ այլ պատճառների շնորհիվ մեր պատմադրությունը զարգացած միջնադարից ի վեր միշտ գիտակցել է հայոց կաթողիկոսների գահակալության ժամանակագրական ճշգրտված ցանկի անհրաժեշտությունը: Այդ ձգտումն ի վերջո պսակվել է Մ. Օրմանյանի կազմած բավական հաջող ցանկով¹, որը հենվում է ժամանակին տպագրված և հայտնի աղբյուրների համադիր քննության վրա: Օրմանյանի աշխատությունից հետո ի հայտ են եկել մատենագրական նոր աղբյուրներ, որոնք երբեմն ճշարրություն են ցանկի այս կամ այն թվականը: Դրանց թվում արժե նշել հատկապես ձեռագրերի հիշատակարանների, փոքրածավալ ժամանակագրական բնագրերի հրատարակությունները:

Դեռևս հատուկ ուսումնասիրության նյութ չեն դարձել պատմիչների երկերում և ձեռագրերում առանձին ընդօրինակված «Կաթողիկոսք Հայոց», «Շար կաթողիկոսացն Հայոց», «Անուանք հայրապետացն Հայոց» և այլ ամենատարբեր խորագրերով գահակալական ցանկերը²:

Այդպիսի ցանկեր պահպանվել են նաև XIV դարի նշանավոր հայ միաբար (unitor) Ներսես Պալիանենցի անունով, որոնք երկու իրարից տարբեր՝ համառոտ և ընդարձակ գործեր են և ձեռագրական ավանդույթով գրեթե միշտ կապված են Մարտիրոս Օպավիացու (XIII դար) «Ժամանակագրության (Գալազանագիրք)»՝ Ներսես Պալիանենցի թարգմանության ձեռագրերի հետ:

Տարբերություններն ավելի ակնառու դարձնելու համար ցանկերից յուրաքանչյուրը ներկայացնում ենք առանձին:

1 Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Գ, մասն Գ, Պեյրութ, 1961, էջ ԽԱ—ԽԶ:

2 Նմանատիպ մեկ-երկու ցանկի և Սամվել Անեցու տեղեկությունների հիման վրա Ա. Տեր-Միքելյանը 1890-ական թթ. կազմել է մի ցանկ. տե՛ս «Սամուէլի քահանայի Անեցույ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, յաղագս զիտի ժամանակաց անցելոց մինչև ի ներկայս ժայրաքաղարարեայ», Յառաջարանով, համեմատութեամբ և ծանօթութիւններով՝ Արշակ Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893, էջ 266—282 (այսուհետև՝ Սամվել Անեցի):

Համառոտն առկա է Պալիանենցի թարգմանության մեզ հասած ինքնագիր ձեռագրում³ և նրան առավել հարազատ ընդօրինակություններում⁴։ Խորագիրն է՝ «Կաթողիկոսք Հայոց», սկսվում է. «Եւ արդ, վասն զի զկնի ինքնակալացն հռոմայեցոց զթագաւորացն Հայոց համառօտաբար ի մէջ բերաք՝ օպատմութիւն և զաւուրս, սմին վասն և զկնի ծայրագունիցն քահանայապետից, և զմասնաւոր առաջնորդաց և կաթողիկոսացն Հայոց շարադրեսցուք՝ զանուանսն և զաւուրս յաջորդութեանն նոցա»⁵։

Հայ թագավորների «պատմութիւն» ասելով, մեր համոզմամբ, Պալիանենցը նկատի բռնի Մովսէս Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկից քաղած իր համեմատաբար ընդարձակ շարադրանքը, իսկ նույն թագավորների «զաւուրս»-ով ակնարկում է այդ շարադրանքում նշանակված թվականներն ու վերջում դրված պարզ ցանկը, որը նշում է սոսկ թագավորների անունները և նրանց իշխանության տարիների քանակը. «Սանատրուկ՝ ամս 18 (32)»-ից մինչև «Կոստանդին, ազգական Լևոնի, կեայ այժմ և թագաւորէ ամս է (7), որ է թուականին հայոց Պ (1351) և Քրիստոսի՝ ՌՅԾԱ (1351)»⁶։ Իսկ կաթողիկոսներին վերաբերող «զանուանսն և զաւուրս» խոսքը ենթադրել է տալիս, որ Պալիանենցը հայ կաթողիկոսներին դիտել է որպէս «մասնավոր առաջնորդներ» («ընդհանրական առաջնորդներ» նա համարում էր Հռոմի պապերին, որոնց պարտավոր էին ենթարկվել նաև հայ կաթողիկոսները⁷), այսինքն՝ համարյա թե թեմակալ արքեպիսկոպոսներ կամ մետրապոլիտներ և հարկ չի համարել նրանց մասին ասել ավելին, քան անունը տալը և իշխանության տարեքանակը նշանակելը։ Եվ, իրոք, այս ցանկը միայն կաթողիկոսների անունների թվարկում է. «Տէր սուրբն Դրիգոր Լուսաւորիչ՝ ամս 1 (30)։ Տէր սուրբ Արիստակէս՝ ամս է (7)»⁸ և այլն։

Ավելին, թվարկումն սկսելուց առաջ Պալիանենցը հարկ է համարում ծանոթագրել. «Իսկ կաթողիկոսք, որք ուղղափառք են լեալ և միաբան սրբուհոյ ևկեղեցոյն Հռոմայ, զնոսայ նախ կէտ զնեմք և «տէր» գրեմք և ապա՝ զանունն։ Եւ որք ոչ են միաբան, զանունն գրեմք սոսկ»⁹։

Ըստ այս ելակետի, թվարկված 75 կաթողիկոսներից 26-ին Պալիանենցը համարել է հռոմեադավան. դրանք են՝ Լուսավորչի տոհմի կաթողիկոսները. Սահակ Բ Ուղկեցուց մինչև Ղևոնդ Ա Եռաստեցի (534—548), Եզր Ա Փառած-

³ Վենետիկի Մխիթարյան մատենադարանի ձեռ. № 1578, էջ 273 (1348—1351 թթ. Ավինյոն. այսուհետև՝ Վենետիկի № 1578)։ Ինքնագրի Վենետիկից ստացված մանրաժապավենը գրանցված է Մաշտոցի անվ. Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ) այլ հավաքածուների ձեռագրերի մանրաժապավենների ժողովածուի 1011 համարի ներքո։

⁴ Տե՛ս ՄՄ, ձեռ. № 3079, էջ 213ր, 214ր, 215ր. Երուսաղեմի հայոց Ս. Հակոբի վանքի մատենադարանի ձեռ. № 995, էջ 452, 454, 455 և այլն։ Քանի որ ձեռքի տակ ունենք ինքնագիրը, ցանկը ներկայացնելիս և քննելիս մյուս ընդօրինակություններին չենք անդրադառնա։

⁵ Վենետիկի № 1578, էջ 273։

⁶ Տե՛ս «Մանր ժամանակագրութիւններ, XIII—XVIII դդ.», կազմեց Վ. Ա. Հակոբյան, հատ. Բ, Երևան, 1956, էջ 196—203 և 203—206 (այսուհետև՝ ՄԺ)։

⁷ Տե՛ս Acta Benedicti XII (1334—1342). E. regestis Vaticanis, allisque fontibus collegit Alosius L. Tautu, Typis poliglottis Vaticanis (Vaticanus), MCMLVIII (1958), էջ 147—149. հմտ. Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. Բ, Կոստանդնուպոլիս, 1913, էջ 1893, 1895 (§§ 1302, 1304)։

⁸ Վենետիկի № 1578, էջ 273։

⁹ Նույն տեղում։

նակերացուց մինչև Եղիա Ա Արճիշեցի (630—717), Հովհաննես Դ Օվայեցուց մինչև Մաշտոց Ա Եղվարդեցի (833—898), Գրիգոր Բ Վկայասերից մինչև Գրիգոր Զ Ապիրատ (1066—1203) և վերջապես՝ Գրիգոր է Անավարդեցի (1293—1307) ու Կոստանգին Գ Կեսարացի (1307—1322) կաթողիկոսները: Յանկի վերջինը Մխիթար Ա Գոնեբեցին է (1341—1355). «Մխիթար Հոռմնցի, որ և տէր Մխիկն, նստի այժմ ամս Ժ»: Վերջացնում է հետևյալ խոսքով. «Միանկամայն կաթողիկոսք Հայոց, որք եղեն ի յամս Ռ[3]ԾԱ (1351), սկսեալ ի սրբոյն Գրիգորէ, են կաթողիկոսք Հե (75)»¹⁰:

1370—1378 թթ.¹¹ մի այլ ձեռքով ցանկի վերջում ծանոթագրվել է. «Տէր Գրիգոր Տուրքերիցանց՝ Անավարդեցին է. նստա[ւ] յամի Ռ3Զ (1306) և վախճանեցաւ սա յամի Տեառն Ռ3Ի (1320)»¹²: Իսկ Ավետիս Օգոստին Կարենցի միարարը 1380 թ. վենետիկում¹³ ավելացրել է մի այլ ծանոթություն. «Բսկ սուրբն Գրիգոր Լուսաւորիչն Հայոց, նստեալ յաթոռ հայրապետութեան զամս Լ (30)՝ յամի ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Յե (305)»¹⁴: 1382—1392 թթ. անկանոն և անփույթ բոլորգրով ավելացված են Մեսրոպ Ա Արտապեցու (1359—1372), Կոստանդին Ե Սսեցու (1372—1374) և ժամանակակից Թեոդորոս Բ Կիլիկեցու անունները, վերջինի մասին ասելով. «Այժմ կայ»¹⁵: Նա, երևի չիմանալով, չի նշանակել Պողոս Ա Սսեցու (1374—1382) անունը, ուստի պետք է մտածել, որ, Ավետիս Օգոստինի նման, այդ ժամանակ ապրել է Հայաստանից հեռու, գուցե Եվրոպայում:

Այսպիսով, ինքնագրի շնորհիվ որոշակիորեն պարզ է դառնում, որ համառոտ ցանկի հեղինակը, իրոք, Ներսես Պալիանենցն է. ցանկից հեշտությամբ դատվում են հետագա հավելումները, որոնք մյուս ձեռագրերի շնորհիվ կարող էին հեղինակային թվալ. Պալիանենցն իր թվարկումն ավարտել է Մխիթար Գոնեբեցու անվամբ՝ 1351 թ.: Այստեղից հստակ երևում է նաև հայ կաթողիկոսներից յուրաքանչյուրի նկատմամբ նրա վերաբերմունքը:

Պալիանենցին վերագրվող մյուս ցանկը արտահայտված է միայն ՄՄ Ն.Ն. 2037 (1421 թ.) և 7841 ձեռագրերում (1668 թ., ընդօրինակված¹⁵, ամենայն հավանականությամբ, նախորդ՝ Ն. 2037 ձեռագրից): Ձեռագրի հնությունը նկատի ունենալով՝ ցանկի պատկերը տալիս ենք ըստ առաջինի:

Սկիզբը բառացի նույնական է Պալիանենցի ցանկի սկզբին. «Եւ արդ... յառաջնորդութեան նոցա»: Շարունակությունն արդեն հիմնովին տարբեր է.

¹⁰ Նույն տեղում: Հաջորդ երեք կաթողիկոսի անունն ավելացնողը Պալիանենցի գրած «ՀԵ»-ն դարձրել է «ՀԸ» (78)»:

¹¹ Հմմտ. նույն տեղում, էջ 239:

¹² Մոտ 70 տարվա հեռավորությունից Անավարդեցու զահակաման թվականները սխալմամբ մոտեցվել են Կոստանդին Կեսարացու ժամանակաշրջանին:

¹³ Տե՛ս Վենետիկի Ն. 1578, էջ 262:

¹⁴ Նույն տեղում, էջ 273:

¹⁵ Ըստ Ա. Հովհաննիսյանի, ձեռագիրը գրված է 1670-ական թթ. (տե՛ս Ա. Հովհաննիսյան, Նոր նյութեր հայ-ուղիտորական պատմագրությունից, «Արարատ», 1914, էջ 1109), ըստ Վ. Հակոբյանի՝ «XVII դ. 60-ական թթ.» (տե՛ս ՄԺ, Բ, էջ 173), Մատենադարանի ձեռագրացուցակի համաձայն՝ «XVII դար (1669-ից հետո)» [տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի», կազմեցին՝ Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթարյան. հատ. Բ, Երևան, 1970 (հատ. Ա, Երևան, 1965), էջ 621 (այսուհետև՝ ՅԶՄՄ)]: Իսկ ձեռագրում կա գրչության որոշակի թվականը (էջ 53բ). «Մինչև աստ նշանագրեցաք ի հայրապետքն Հոռմայ ի սորա (Կղեմես Բ պապի—Յ. Վ.) ժամանակին՝ ըվին ՌԱԿԸ (1668). մալիսի ԺԴ (14)»:

Հռոմին միաբան համարվող կաթողիկոսներին ալե տիտղոսով պատվելու, իսկ մյուսների սոսկ անունը նշելու պայմանն իսպառ բացակայում է՝ բոլոր կաթողիկոսներն ունեն ալե պատվանունը: Փոխարենը հանդես է գալիս մի նոր խորագիր՝ «Շառաղբուրիւն հայրապետացն Հայոց»: Վերնագրին հաջորդող նախադասութիւնը շեշտում է հայոց եկեղեցու առաքելական սկզբնավորութիւն ունենալը (որ դեմ է Պալիանենցի համոզմունքներին). «Արդ, զկնի համբարձման Տեառն մէրո յերկինս և ընդունելո զՀոգին Սուրբ երանելի առաքելոցն, վիճակաւ բաժանեցին զաշխարհս ամենայն, և եհաս վիճակ սուրբ առաքելոցն, Բարդուղիմէոսի և Թադէոսի երթալ յաշխարհն Հայոց: Իսկ յետ 3 և 49 (իմա՝ ՄԿԶ (266) — 3. վ.)¹⁶ ամի անցանելո ի վերայ, փոխանորդէ զաթոռ նոցա՝ քրտնաշան նահատակութեամբ, սուրբն Գրիգոր, երկնատեսակ փառօք զարդարեալ: Սալ յէտ ԵԺ (15) ամաց թագաւորութեանն Տրդատայ, նստաւ յաթոռն սուրբ Թադէոսի մինչև ի ԽԶ (46) ամն Տրդատայ. փոխեցաւ յաշխարհն կենդանեաց, կեցեալ յաթոռ հայրապետութեան ամս Լ (30)»¹⁷: Սա, ինչ խոսք, նախորդ ցանկի մեկտողանոց հաղորդումից շատ է տարբերվում: Տարբերվում են նաև հաջորդ բոլոր կաթողիկոսներին վերաբերող բնորոշումները, ծայրահեղ դեպքում ցույց է տրվում կաթողիկոսի ծագումը: Մի օրինակ. «Տէր ներսէս ի Տայոց, ի գեղջէ Իշխանաց, ամս Ի (20): Սալ, աստուածային սիրովն վառեալ, երկայսիրաբար յարդարեալ, շինեաց զբաղմապայծառ փարախն բանաւոր ոշխարաց ի Վաղարշապատ քաղաքի, և զբաւարան սրբոյ վկային՝ յԱրտաշատ քաղաքի, և զվկայարան սրբոյն Սերգեայ՝ ի Դէին (իմա՝ Դուին — 5. վ.) քաղաքի»: Այս ցանկն ուղղակիորեն քաղկեդոնականութիւն է վերադրում միայն Սահակ Պարթևին (387—436), եզր Փառաժնակերտցուն (630—641), Զաքարիա Զագեցուն (855—876), Վահան Սյունեցուն (968—969)՝ սրիւմաւմբ շփոթված Ստեփաննոս Գ Սևանցու (969—972) հետ, և նրա շրջանում՝ Գրիգոր Նարեկացուն, Գրիգոր Գ Պահլավունուն (1113—1166), Ներսէս Դ Շնորհալուն (1166—1173), Գրիգոր Դ Տղային (1173—1193) և նրա շրջանում՝ Ներսէս Լամբրոնացուն, Գրիգոր Անավարդեցուն և Կոստանդին Կեսարացուն:

Չի խորշում Ներսէս Բ Բագրևանդցու (548—557), Մովսէս Բ Եզվարդեցու (574—604) և Հովհաննէս Օձնեցու (717—728) հակաքաղկեդոնական գործունեութեան մասին հայտարարելուց:

Գրիգոր Անավարդեցուն վերաբերող հատվածում ասվում է. «...պայծառացոյց կարգօք զեկեղեցի Հայոց և բազում անգամ ջանաց միաբունել ընդ մեծի եկեղեցոյն Հռոմայ, զոր խնդրէր Յոհանէս ԻԲ պապն և կամէր ժողով (իմա՝ ժողովով—Յ. վ.) հաստատել, զի կատարեալ լցցեն զնոյլն/ս, որ է այս»¹⁸ (ընդգծումը մերն է—Յ. վ.): Ապա գալիս է «Թուխտ տեպոն Գրիգորի և կտակ, զոր զրեաց առ թագաւորն Հեթում» հետաքրքիր բնագիրը, որում վերջինիս կողմ է արվում եկեղեցական ժողով հրավիրել և լիովին ընդունել կաթոլիկ եկեղեցու դավանանքը, ծեսն ու դերիշխանութիւնը: Այս հրահանգներին

¹⁶ Հմմտ. ՄՄ. N° 3531, էջ 327ա:

¹⁷ ՄՄ N° 2037, էջ 134ա:

¹⁸ Նույն տեղում, էջ 135բ: Հովհաննէս ԲԲ պապի (1317—1334) անվան ժամանակագրորեն սխալ հիշատակումը անուղղակի ձևով ցույց է տալիս, որ ցանկն ստեղծվել է նրա գահակալութեան շրջանում:

Համաձայն Հեթումը Կիլիկիայի եպիսկոպոսների, վանահայրերի, վարդապետների և իշխանների ժողով է հրավիրում, կաթողիկոսության թեկնածու, Կեսարիայի Կոստանդին եպիսկոպոսին ընդունել է տալիս Անավարզեցու թըղթի պահանջները, ապա ժողովը նրան ընտրում է Հայոց կաթողիկոս։ Նույն ժողովը 1307 թ. Սսում ընդունում է Հռոմի հետ Անավարզեցու պահանջած միաբանությունը։ Ցանկին կցված է այդ ժողովի որոշումը՝ նրա մասնակիցների անունների կրկնակի հիշատակմամբ։ Ապա հետևում է Հեթում II-ի (1289—1307) և Լևոն IV-ի (1305—1307)՝ Պիլարիզու թաթար ղորականի ձեռքով սպանվելու մասին տեղեկությունը, նշվում է Սսի ժողովի որոշումները շատերի կողմից շրջադրվելու և առաջացած ըմբոստությունների և, ի վերջո, 1316 թ. Աղանայի Լրկրորդ ժողովի անհրաժեշտության առաջացման մասին։

Կասկած չկա, որ տարբեր ծրագրերով ստեղծված, տարբեր կառուցվածք և բովանդակությամբ, հատկապես դավանական և աշխարհայացքային տարբեր սկզբունքներ ունեցող երկու ցանկ միևնույն հեղինակին՝ Ներսես Պալիանենցին վերագրելը ճիշտ չի լինի։ Միաժամանակ, ինչպես վերևում ասվեց, Պալիանենցի ինքնագրում համառոտ ցանկի առկայության փաստը բացառում է ընդարձակը ևս նրանը համարելու հնարավորությունը։

ՄՄ № 2037 ձեռագրում Մարտինոս Օպավիացու «Ժամանակագրությանը» կցված ցանկի և ճիշդիտ քարոզիչ Կղեմես Գալանոսի եռահատոր ջատագովանության գրքի¹⁹ առաջին (պատմական) հատորում օգտագործված հայկական աղբյուրի նույնությունն առաջին անգամ նկատել է Ա. Տեր-Միքելյանը. «Չամչյան ճանաչում է Կղեմեսի անանուն պատմիչին, որ և նորան «արբանյակ չարի» է կոչում (Չամչ., Գ. էջ 303)»։ Նա էլ առաջինը հրապարակել է Ներսես Պալիանենցին ցանկի հեղինակ համարելու մասին դրույթը. «Այդ անձն է ներսես Պալիանենց ունիթոն, որ ամեն միջոց գործ դրեց հայերին լատինացնելու համար»²⁰։

Գալանոսի գրքի և նրա տեսակետների շուրջ XVII—XX դդ. ընթացքում դավանաբանական բազմաթիվ վեճեր են եղել²¹, ուստի հարկադրված ենք մի խոքոր շեղումով անդրադառնալ կաթողիկ քարոզչին և ցանկի նրա հրատարակությունը։

Ուրբանոս Ը պապի (1623—1644) կողմից ուղարկվելով «քարոզելու զուղղափառ հաւատն... այլոց սղգաց» և «շրջելով զարևելեան աշխարհի», նա

19 Կղեմես Գալանոս, Միաբանութիւն Հայոց սուրբ եկեղեցոյն ընդ մեծի սուրբ եկեղեցոյն Հռովմայ. Շարադրեալ ի լերկուս հատորս՝ ի պատմական և վիճաբանական, քի կարդէ Թէատինոսաց Կղեմէս վարդապետէ—Concilatione ecclesiae Armenae cum Romana. Ex ipsis Armenorum patrum et doctorum testimoniis, in duas partes, historicalem et Controversialem divisae, Auctore Clemente Galano. Ա հատոր, Romae, 1650, Բ հատոր, մասն Ա, Romae, 1658, Բ հատոր, մասն Բ, Romae, 1661 (այսուհետև՝ Գալանոս)։

20 Ա. Տեր-Միքելյան, եկեղեցական աղմուկները ԺԳ դարի սկզբում, «Արարատ», 1895, էջ 510։ Հմմտ. Սամվել Անեցի, էջ 269։ Գիտենք, որ Վենետիկի № 1578 և 626 ձեռագրերում Կղեմեսի օգտագործած ցանկը չկա, չի կարելի պնդել, թե այն կա նույն մատենադարանի մեզ անձանոթի № 284, 1322 և 1412 ձեռագրերում, ուստի վստահ չենք, որ Ս. Չամչյանը պետք է իմանար ցանկի և Պալիանենցի ձեռագրերի կապի մասին։

21 Բավական է հիշատակել միայն Գևորգ Մխլայիմի գրքերը. Գիրք վիճաբանութեան ընդդէմ երկարնակաց, Կ. Պոլիս, 1734 (256 էջ). Ճշմարիտ նշանակութիւն կաթողիկէութեան, Կ. Պոլիս, 1750 (272 էջ). Վկայութիւնք հայրապետաց յաղագս միոյ բնութեան Քրիստոսի ժողովեալ ի դրոցն լատինացոց, Կ. Պոլիս, 1749 կամ 1750 (118 էջ)։

գտել է իր գործունեության միջավայրը. «Առաւել բնականացաք ի մէջ հայոց ազգի ամս յուրվս ի բազում տեղիս՝ ի յաշխարհն Հայաստանեաց և Ասորոց, և Վրաց, և Պոնտացոց, և Թաթարաց, և ի Սմիռնացոց և ես ի յարքայանիսա քաղաքն Կոստանդնուպօլսի...»²²: Հետո նա կարդացել է «զգիրս նոցա» (Հայոց—Յ. Վ.) և հանգել այն եզրակացության, թե «ամենայն նախահաւորն Հայոց, մանաւանդ որ սրբագոյնք և իմաստնագոյնք», լիովին միաբան և դավանակից են եղել Հռոմին, «բաց ի սակաւուց ոմանց», որոնք միայն սնափառության ու կեղծավորության պատճառով են Հռոմին ոչ համընթաց դիրք բռնել: Այս «կարևոր» եզրակացությունից հետո նա սկսել է «աւրտաճանել ի պատմագրութեանցն Հայոց, զոր ինչ հանդիպեցաւ յեկեղեցին իւրեանց՝ ի սկզբբանէ անտի. թէ շար, թէ բարի» և այդ ամենն իր «մեկնութիւն»-ներով հանդերձ դրել է հայերի առաջ, որպեսզի նրանք կարողանան «մերժել զշարն և ընդունել զբարին»:

Գալանոսը կարողացել է հարուստ հայ պատմագրությունից ընտրել իր նպատակին շատ հարմար մի բնագիր և, լավ գիտակցելով հայոց պատմութեան հարցերը քննելու դժվարությունը («մինչև ցայժմ ոչ կարաց ֆոանկ պատմիչ ոք զբռնն հարել ի սոյնպիսի օտար պատմագրութիւնս»²³), գտել է էլքը. «Բայց... յօժարապէս ախորժեսցուք համարձակիլ ի յայս անհուն ծովս մտանել, մանաւանդ զի զմեզ առաջնորդէ ոմն հայ պատմիչ, որ գրեալ էր ի վաղուց զՇարաղրութիւն ամենայն հայրապետացն Հայոց»²⁴: Վերը ներկայացված ցանկի և Գալանոսի օգտագործած աղբյուրի խորագրերը նույնն են: Գալանոսի պատմական հատորը սկսվում է այդ վերնագրով և նրան հաջորդող «ընդ մեկնութեան վերադիտող վարդապետին» ծանոթութեամբ²⁵: Ողջ հատորի ընթացքում «Հետևի Հայոց պատմութիւնն» վերտառութեամբ, հատված առ հատված (ըստ «գլուխ»-ների) ներկայացնում է այդ բնագիրը և յուրաքանչյուր հատվածի կցում իր «մեկնութիւնը»: Գալանոսի մասնատած ցանկի և մեզ առկան ծանոթ ՄՄ ՄՄ 2037 ու 7841 ձեռագրերի ունեցածի համեմատությունն աննշան գրչական տարբերություններ է տալիս. ուրեմն նա ճշտիվ վերարտադրել է իր ձեռքին եղած ձեռագիրը և դրա շնորհիվ, հանձին ճիշդիտ քարոզչի գրքի, ստանում ենք բնագրի ևս մի ձեռագրի պատկերը²⁶:

Այժմ ձեռագրագիտական և աղբյուրագիտական այլ կովաններով փորձենք քննել ընդարձակ ցանկը, պարզել նրա աղբյուրները, առաջացման մոտավոր ժամանակն ու հանգամանքները:

Նախ մտովի մի կողմ դնենք Անավարդեցու թուղթն ու ժողովների կանոնները, և ցանկն անհամեմատ կպարզվի. նրա նկատմամբ փոքր տարբերություններ ունեցող համարժեք ցանկեր կան նաև այլ ձեռագրերում: Դրանցից առաջինը ՄՄ ՄՄ 1151-ն է (162բ—167բ): Մեզ հետաքրքրող մասը 1693 թ. Կ. Պոլսում գրել է Կոմիտաս երեց Քյոմուրճյանը: Ձեռագրի մյուս նյութերը որևէ ձեռագիր չեն առնչվում ցանկին: Կոստանդին Կեսարացու անունից հետո ավելացված է. «Յաւուրս սորա դարձեալ ընկալան զժողովն Քաղկեդոնի և հաւունեցան»:

²² Գալանոս, Ա, էջ 2:

²³ Նույն տեղում, էջ 1:

²⁴ Նույն տեղում, էջ 2:

²⁵ Նույն տեղում, էջ 4:

²⁶ Տե՛ս և մատ. նույն տեղում, Ա, էջ 4, 12, 40, 45, 47, 60, 61, 67 և այլն. հատկապես էջ 435—451 և 455—505:

առնել զտօն Մենդեանն Քրիստոսի ի Ին (25)-ն դեկտեմբերի ամսոյ և զամենայն տօնսն՝ յիւրաքանչիւր տեղւոջ, ուր և դիպեացի. և արկանել ջուր ի սուրբ Խորհուրդն: Եւ այս ղործեցաւ ի թվականիս 202 (1307)-ին»²⁷: Այս տողերը ժողովների ուղղակի արձագանքն են՝ գրված ավանդական դավանանք ունեցող Հեղինակի ձեռքով: Վերջում ցանկի ընդհանուր ծրագրով ավելացված են Կոստանդին Դ Լամբրոնացու (1323—1326), Հակոբ Բ Անավարզեցու (1327—1341) և Մխիթար Գոնեւրցու անունները, որը նշանակում է, թե նախագաղափար օրինակը գրված է եղել վերջինի շրջանում:

Հաջորդ ձեռագիրը ՄՄ № 3531-ն է (337ա—343ա)՝ 1679 թ., գրիչ՝ Ղուկաս, ստացող՝ Միքայել Աստապատցի: Զեռագրի նյութերը դավանաբանական առումով կաթոլիկամետ չեն: Այստեղ ևս շեշտվում է Անավարզեցու քաղկեդոնասիրությունը, իսկ Կոստանդին Կեսարացու նույնաբնույթ քայլերի մասին խոսք չկա: Նախորդի նման ունի հիշյալ երեք կաթողիկոսների անունների հավելումը, այսինքն՝ «սոցա թվին 279 (1344)» լրացումը և գրիչի մի արժեքավոր հիշատակագրություն. «Դրեցաւ սակաւ գիրս լաւ և յընդիր օրինակէ՝ ի Հայր մաշտոցէն, որ էր գրեալ ի թագաւորութեան Հայոց Կոստանդեա Է: կաթողիկոսութեան տեառն տէր Մխիթարայ»²⁸:

Այս «Հայր մաշտոցն», անկասկած, այժմ Վենետիկի Մխիթարյան մատենադարանին պատկանող № 1173 ձեռագիրն է (1345 թ., Սիս, գրիչ՝ Դրիգոր դպիր, ստացող՝ Բարդուղիմեոս առաքյալի թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոս), որը, երեւի ավանդաբար, կոչվում է «Սսեցւոց մաշտոց», որովհետեւ «է գործ բաղդատեալ հայ և լատին ծիսից», ունի 103 կանոն, «իւր տեսակին մէջ ամենափարթամն է՝ նորանոր կանոններով... օրհնութեամբ և ծիսաւկատարութիւններով, եւ ահա սոսոր համար իսկ մեծապէս ուշագրաւ՝ հայկական ծիսաւրանի զարգացման պատմութեան համար»²⁹:

«Սսեցւոց մաշտոցի» վերջում, իրոք, կա «Շարադրութիւն հայրապետացն Հայոց» խորագրով բնագիր, որը Վենետիկի ցուցակում միայն հիշատակվել է³⁰: Բայց նկարագրության այս թերութիւնը լրացնում է ՄՄ № 973 մաշտոցը³¹, որի բոլոր կանոնները, խրատները, ընթերցվածները և ձեռագիրը եղբարակող նույնանուն կաթողիկոսացանկը (338բ—343բ) համապատասխանում են Վենետիկի ձեռագրին (մաշտոց ԺԳ)³²: Ն. Ակինյանն այն թվագրում է XV դարով, իսկ Մատենադարանի ձեռագրացուցակը՝ XVI դարով. մեզ ավելի

27 ՄՄ № 1151, էջ 167բ:

28 ՄՄ № 3531, էջ 306ա:

29 Տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հատ. Գ, Մաշտոց—Գիրք ձեռնագրութեանց, յօրինեցին հ. Բարսեղ Սարգիսեան և հ. Գրիգոր Սարգսեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1966, էջ 143 և 190 (այսուհետեւ՝ ՍՅՎ, Գ):

30 ՍՅՎ, Գ, էջ 143:

31 Ն. Ակինյանի հետեղությամբ (տե՛ս «Ցուցակ ձեռագրաց ՀՍԽՂ Վաղարշապատի պատկան Մատենադարանի», Վաղարշապատ, 1924—1928, ՄՄ Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, № 96, մասն Գ, էջ 897ա և 898ա), Մաշտոցի անվան Մատենադարանի ցուցակում (Ա, էջ 456) այս մաշտոցը սխալմամբ վերագրվել է Ներսես Պալիանենցին: Պալիանենցի մաշտոցը թարգմանված է լատիներենից և բոլորովին տարբեր է այս խմբագրութիւնից:

32 «Սսեցւոց մաշտոցի» այլ օրինակ մեզ հայտնի չէ, բայց նորերի հայտնաբերման դեպքում անգամ պետք է համոզված լինել, որ իր ստեղծման շրջանում իսկ այն լայն գործածութիւն չի ունեցել:

հավանական է թվում վերջինը: ՄՄ №№ 1151 և 3531 ձեռագրերի նման այստեղ ևս ցանկը եզրափակվում է «տէր Մխիթար ի Գոներոյն եպիսկոպոս. նստաւ յաթոռ հայրապետութեան՝ փոխանորդ նորա»³³ բառերով:

Այսպիսով, նշված շորս ձեռագրի շնորհիվ ցանկի ստեղծման հավանական ժամանակը 1345 թ. այս կողմ գալ չի կարող, իսկ երբ հիշում ենք, որ Պալիանենցի ցանկը պետք է կազմված լիներ 1348—1351 թթ. միջակայքում, մի ավելորդ անգամ ևս համոզվում ենք այս ցանկին նրա անմասն լինելու մեջ:

ՄՄ № 732 ձեռագիրն ավելի է հստակեցնում հարցը. այն գրված է 1322 թ., հավանաբար՝ Կիլիկիայում, Մկրտիչ գրիչի ձեռքով և ոմն պարոն Սողոմոնի պատվերով: Մեր ցանկն այստեղ վերնագրի «Շարադրութիւն» բառի փոխարեն ունի «Շարադրումն» ձևը: Ցանկը կրող (343ա—347ա) և հաջորդ (մինչև 368բ) թերթերը, որոնք պարունակում են նաև ներսես Լամբրոնացու «Գլխակարգութիւնք Հոռոմոց», Թագեոս եպիսկոպոսի «Խոստովանութիւն հավաւոյ» և Գրիգոր Վկայասերի «Հավատամք որ ի Սուրբ Երրորդութիւնն» գործերը, գրված են այլ ձեռքով և, ըստ ամենայնի, բուն ձեռագրից ավելի հին են³⁴: Ցանկը վերջանում էր Ստեփաննոս Հոռոմկլայեցիով, բայց պարզվեց, որ վերջին՝ 347-րդ թերթը կազմված էր խնամքով իրար սոսնձված երկու թղթից: Անջատելուց հետո բացված զույգ էջում կարդացվում են Գրիգոր Անավարդեցուն և Կոստանդին Կեսարացուն վերաբերող մասերը, որոնք շնչին տարբերություններով համընկնում են Գալանոսի տպագրածին: Երկու էջի վրա էլ ջնջելու նպատակով բուն ձեռագրի թանաքով ոլորուն և խաշած գծեր են բաշտված: Անավարդեցու՝ Հոռոմի հետ միաբանելու փորձերի մասին պատմող հատվածի լուսանցում բուն ձեռագրի գրով երեք անգամ գրված է. «Սուտ է»: Նշանակում է, որ անգամ դեպքերի մոտ ժամանակակիցը չէր հանդուրժում միայն կաթողիկոսարանի, Կիլիկիայի բարձրաստիճան հոգևորականության և արքունիքի ընդունած միաբանությունը ողջ ժողովրդի վրա տարածելու միտում ունեցող այդ տողերը:

Կարծում ենք, որ նշված ձեռագրերում (ՄՄ №№ 732, 973, 1151, 3531) ընդօրինակված կաթողիկոսացանկը ներսես Պալիանենցին վերագրելը սխալ համարելու համար այժմ բավականաչափ հիմք ունենք³⁵:

Բավական ուշագրավ տեղեկություն է պահպանվել նաև «Սսի Հայր մաշտոց» ձեռագրում. «Նրաւստ Կոստանդին կաթողիկոս, գտայ զՇարադրութիւնս Բայրապետացն Հայոց՝ դրեալ ձեռամբ սուրբ հաւրն մերոյ ներսիսի արքեպիսկոպոսի Տարսոնի, և ետու գրեալ աստ, որ է այս. Ա. ՌԾԹ (1610)»³⁶: Որ հիշատակարանում մատնացուցված բնագիրը մեղ հետաքրքրողն է, կասկած չի նեղ չի կարող՝ Մաշտոցի անվան Մատենադարանի մի քանի տասնյակ ձեռագրերում առկա կաթողիկոսացանկերից միայն այն ունի այդ խորագիրը: Իսկ ո՞վ է Կոստանդին կաթողիկոսը:

³³ ՄՄ № 973, էջ 343ր:

³⁴ Բուն ձեռագրի մուգ սև թանաքի համեմատ՝ նշված թերթերինը բաց դարչնագույն է, ձեռագիրն ունի 16—18 (հիմնականում՝ 17) տող, մի տողում՝ 28—30 տառ, 7×11 սմ զրադաշտ, իսկ այս թերթերը՝ 28 տող, տողում՝ 36—39 տառ, 8,2×12,5 սմ զրադաշտ: Տարբերվում են նաև թղթերն ու գրերը:

³⁵ Տե՛ս 82ՄՄ, Ա, էջ 395, 450, 488 և 1035:

³⁶ «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Հայեպի և Անթիլիասի ու մասնաւորաց, հատ. Բ, կազմեց Արտաւագդարճեպոս. Սիւրմէեան..., Հալեպ, 1936, էջ 31:

«Սսի Հայր մաշտոցը», որ, անկասկած, վերահիշյալ «Սսեցւոց մաշտոցի» վերջին մասն է (մեռոնի, հիւլանդների ձեթի, եպիսկոպոսի, կաթողիկոսի, թաղավորի՝ ըստ կաթողիկ եկեղեցու, օրհնության կանոնները), Ա. Սյուրմեյանը թվագրում է XIV դարի սկզբով՝ 1311 թ. առաջ, հիշատակարաններից մեկի համաձայն ձեռագրի ստացող համարում է Կոստանդին Կեսարացուն³⁷։ Կազմող Բոսլինը «երկրորդ լուսաւորիչ հայկազան ազգիս տէր Կոստ[անդին]»-ին խնդրում է հիշել իրեն³⁸։ Հասկանալի է, որ XIV դարի Կոստանդին անունով երեք կաթողիկոսներից միայն Կեսարացին կարող էր «երկրորդ լուսաւորիչ» որոշորջվել՝ Սսի և Ադանայի ժողովների և նրանց որոշումների գործադրման համար իր թափած ջանքերի շնորհիւ։ Նույն ձեռագրի երեք այլ հիշատակագրության հետ միասին, ահադ. Լ. Խաչիկյանը Կոստանդին կաթողիկոսի հիշատակարանը տպագրել է 1311 թ. ներքո³⁹։ Հիշատակարանի թվականը՝ «Ա. ԹԾԹ», որ Ա. Սյուրմեյանը վերծանել է 1610 թ.,⁴⁰ ավելի հարմար ենք համարում հասկանալ իբրև 1310 թ.՝ ԹԾԹ-ի փոխարեն կարդալով ՉԾԹ։ Այս վերջինը շտկումով բոլոր փաստերը ժամանակագրորեն հիշատակարանի հեղինակ են մատնացուցում Կոստանդին Կեսարացուն։

Հետազայում «Սսի Հայր մաշտոցից» ծագել է ձեռնագրության մաշտոցների մի մասը⁴¹, նույն ուղիով տարածվել է նաև Կեսարացու հիշատակարանը⁴², բայց այդ մաշտոցներից որևէ մեկում Կեսարացու «գտած» և Համբրոնացուն վերագրած ցանկը չկա, թեև հիշատակարանի «որ է այս» վերջը ենթադրել է աւալիս, որ այն սպասելի էր։ Նկատի ունենալով, որ, ինչպես արդեն ասացինք, «Սսի Հայր մաշտոցի» և նրանից ծագող ձեռնագրության մաշտոցների կանոնները ճշտվ համապատասխանում են «Սսեցւոց մաշտոցի» (Վենետիկի № 1173 և ՄՄ № 973) վերջին կանոններին, հակված ենք կարծելու, որ վերջինս ձևավորվել է նույն Կոստանդին Կեսարացու շրջանում⁴³, նրա նախածեռնությամբ ու հրահանգով, և «Սսեցւոց մաշտոցի» մեզ հայտնի երկու ձե-

37 Նույն տեղում, էջ 11 և 31. «Զերջանիկ սուրբ հայրապետն Հայաստանեայց զտէր Կոստանդին՝ զստացող սորին, յիշեսցիք...»։

38 Նույն տեղում, էջ 32։

39 Տե՛ս «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 78։

40 Նույն սխալը կրկնել է նաև Գ. Սարգսյանը՝ 1610 թ. թվագրելով Վենետիկի մի նոտրգիր ձեռագիր (տե՛ս ՍՅՎ, Գ, էջ 451—454)։

41 Տե՛ս օրինակ՝ ՍՅՎ, Գ, էջ 451—454, 637—642, 645—648, 665—666։

42 Տե՛ս օրինակ՝ ՍՅՎ, Գ, էջ 454, ՄՄ № 2855, էջ 45բ—46ա, Երուսաղեմի № 444, էջ 43 (տե՛ս ն. Պողարյան, Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբյանց, հատ. Բ, Երուսաղեմ, 1967, էջ 407)։

43 Մաշտոցը Կեսարացու շրջանում խմբագրված ծիսական միակ ժողովածուն չէ. 1319 թ. Խորին անասպատի միաբան Կոստանդինը, Պաղտին մարաջախտի պատվերով, «իրաւք իրաւք անյարմար եւ անկարգ» դիտված, ավանդական կանոնով գրված ճաշոցը, որ Պաղտինին ժառանգարար հասել էր Սմբատ Գունդստարից, վերաձևել է «ըստ սահմանի կաթաւիկէ եկեղեցւոյ» հետեյալ կերպ՝ քանդել է ձեռագիրը, ոչ հաճելի հատվածները հանել և, թերին լրացնելով, աճեցրել այնպես, որ բոլոր տոները համապատասխանեն կաթողիկ եկեղեցու պահանջներին (տե՛ս E. Tisserant, Codices Armeni Bibliothecae Vaticanae: Borgiani, Vaticani, Barberiniani, Chisani... Romae, Typis Polyglottis Vaticanis., MCMXXVII (1927), էջ 99)։ Եթե մարաջախտը նման ձևով «կարգավորում» էր իր անձնական ճաշոցը, առավել ևս կաթողիկոսը կարող էր «շտկել» ծիսարանը։

ռազմի վերջում առկա կաթողիկոսացանկն էլ հենց Կեսարացու խոստացած «Շարադրութիւնն» է:

Բսկ այժմ դառնանք Գալանոսի գրքին:

Իր հրատարակության վերջում նա գրել է. «Աստ եղերի կանոնք Ատանայ ժողովոյն Հայոց և Շարակարգութիւն պատրիարքոսց նոցին, զոր հայ պատմիչն յարեւելից ճառէ մինչ առ վերասացեալ տէր Կոստանդին պատրիարքն (Կեսարացի—Յ. Վ.), որ էր իւրում ժամանակի»⁴⁴: Բնագրում այս եղրակացութեան համար հիմք, իրոք, կա և ավելի, քան ցանկի՝ Կեսարացու անվան հիշատակմամբ վերջանալն է: Սսի ժողովի կանոնից և նրա մասնակիցների ցանկից անմիջապէս հետո կարդում ենք. «Եւ յորժամ կատարեցաւ զործս այս... ուրախ եղաք ի Տէր»⁴⁵: Այս տողին հաջորդող բաժական ծավալուն հատվածը դժվար է առաջին դեմքով՝ իբրև ականատես-ժամանակակցի շարադրանք: Այսպէս, 1307 թ. թաթար զորական Պիլարդուի կողմից Հեթում II-ի, Լևոն IV-ի և հայ իշխանների սպանութեան փաստին հաջորդում է. «...և անհնարին աղետիւքս այս վանեալ էաք ի խոր խաւարի և, ի գիշեր տրտմութեան պաշարեալ, ոչ մնայաք խաղաղութեան լուսոյ, և մինչ յայս էաք՝ անյոյս լեալ ի մարդկանէ, և առ Աստուած ապաւինէաք»⁴⁶ և այլն: Պատմում է Օշինի թագավոր օծվելու մասին. «Եւ որչափ առաւել տրտմեցաք ընդ վշտին, նայ և կրկնապատիկ ուրախացաք ընդ լուծումն նորին, ուստի, օծմամբ Սուրբ Հոգւոյն, օծաք թագաւոր ի թվիս հայոց ԶԾԷ (1308): Եւ սոյն կանոնիւս (իմա՝ Սսի ժողովի—Յ. Վ.), զոր վերոյ յիշեալ եղև, դարձեալ սովաւ վարեալ առաջնորդէաք ժողովրդեան մերոյ, և վասն այսր սկսան յմանք հակառակի կանոնիս... եւ աստ զի՞նչ աւեմ զգործ արեալիս մերո... ասեմ զկայսերացն և զթագաւորաց...»⁴⁷: Ասկա պատմում է ըմբոստացողներին զսպելու համար Օշինի ձեռնարկած բռնութիւնների մասին:

Այսուհետև պարզ է, որ բերված տողերն ապացուցում են Կոստանդին Կեսարացու շրջանում և Աղանայի ժողովից հետո (1316—1322 թթ. ընթացքում) ցանկի կազմված լինելը: Հնարավոր է դառնում նաև ենթադրել, որ կաթողիկոսների անվանացանկը, Անավարդեցու թուղթը և ժողովների կանոններն իբրև և կցվել կաթողիկոսին ու կաթողիկոսարանին մոտ կանգնած որևէ բարձրաստիճան հոգևորականի ձեռքով:

Հասկանալի է, որ կազմողը ձեռքի տակ ունեցել է Անավարդեցու թղթի և ժողովների կանոնների կաթողիկոսարանի դիվանից վերցված բնագրերը. միևնույն է պարզել, թե ի՞նչ աղբյուրից է ծագում Անավարդեցուն նախորդած կաթողիկոսների գահացանկը, այլ կերպ ասած՝ որո՞նք են Կեսարացու գտած «Շարադրութեան» աղբյուրները և ճիշտ է ներսեւ կամբրոնացուն նրա հեղինակ համարելը:

Հայ մատենագրութեան մեջ գոյություն ունեցող կաթողիկոսացանկերից (չհաշված XVII—XVIII դդ. կազմվածները) միայն Հովհաննես Դրասխանակերտցի կաթողիկոս-պատմագրի անունով հայտնի երկի վերնագիրն է մուսուլմանում մեղ արդեն հայտնի խորագրին. «Շարից հայրապետացն Հայոց յայտա-

⁴⁴ Գալանոս, Ա, էջ 506:

⁴⁵ ՄՄ № 2037, էջ 141ր, հմմտ. Գալանոս, Ա, էջ 473:

⁴⁶ Նույն տեղում:

⁴⁷ Նույն տեղում: Ասկա գալիս է Սղանայի ժողովի արձանագրությունը:

րարութիւն»⁴⁸։ Եվ, իրոք, այս երկու գահացանկի միջև կան հետաքրքիր նմանութիւններ ու տարբերութիւններ։ Լամբրոնացու-Կեսարացու տարբերակը (անվանումը պայմանական է), բնականաբար, չունի Դրասխանակերտցու նախաբան-տողերը. «Իրաւունս և զայս... յառաջնորդութեան իւրեանց»⁴⁹։ Այստեղ հայ եկեղեցու առաքելական սկզբնավորութեան և Լուսավորչի գահակալման հատվածները վերաշարադրված են բացառապէս ըստ Դրասխանակերտցու։

Այժմ մի քանի զուգահրմամբ ներկայացնենք նրանց առավել ցայտուն աղերսները⁵⁰։

ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ

(ՄՄ № 2966, էջ 88ա—88բ)

Ութերորդ. տէր սուրբն Փառներսեհ, ոչ ի Պահլաւեան ազգէ, այլ էր ոմն ի գաւառէ Տարօնոյ, ի գեղջէ Աշտիշատից, ամս Դ (3)։

ԺԶ. Տէր Գիւտ ի գաւառէ Վանանդայ, ի գեղջէ Օթմսոյ, յաշակերտութենէ սրբոյն Սահակայ, ամս Ժ (10)։ Սա կացեալ ընդ առաջ ամս Թ (9), հաստատեաց զաթոռ հայրապետութեան ի ԴՎին քաղաքի, ի սաղրելոյ սրբոյն Վարդանաց և այլոց նախարարացն Հայոց։

ԻԷ. Տէր Աբրահամ ի գաւառէ Ռըշտունեաց, ի գեղջէ Աբիթանից, ամս ԻԳ (23)։ Ի յաւուրս սորա ի բաց կացին Վիրք ի միաբանութենէ Հայոց և հաճեցան լինել կցորդ շար աղանդոյն քաղկեդոնացոց, փոխեալ զսահման հարանցն սրբոց և մոռացան զաստուածեղէն ուխտն։

ԺԸ. Տէր Բաբգէն ի գաւառէն Վանանդայ, ի գեղջէ յՈթմսոյ, ամս Զ (6)։ Յաւուրս սորա, ի սորին իսկ սաղրե-

ԼԱՄԲՐՈՆԱՅՈՒ-ԿԵՍԱՐԱՅՈՒ

ՏԱՐԲԵՐԱԿ

(ՄՄ № 2037, էջ 134ա—134բ)

Ե. Տէր Փառներսեհ, ոչ Պահլաւ, այլ ոմն ի գաւառէն Տարունո, ի գեղջէ Աշտիշատա, ամս Ե (5)։

ԺԳ. Տէր Գիւտ ի Վանանդայ, յՈթմուզ գեղջէ, յաշակերտութենէ սրբոյն Սահակայ, ամս ԺԵ (15)։ Սա ընդ յառաջինսն կացեալ, հաստատեաց զաթոռ հայրապետութեան ի ԴՎին՝ զկնի կատարման սրբոց Վարդանանցն։

ԻԴ. Տէր Աբրահամ յԸռշտունեաց, ի գեղջէ Աղբաթանից, ամս ԻԴ (23)։ Յաւուրս սորա ի բաց կացին Վիրք ի միաբանութենէ Հայոց և միաբանեցան Յունաց, և ընկալան զամենալսուրբ Ժողովն Քաղկեդոնի, և էր կաթօլիկոսն Վրաց Կիրիոն, որ զբաժանումն արար։

ԺԵ. Տէր Բաբգէն ի Վանանդայ, որ է Կարս, ի յՈթմուզ գեղջէ, ամս Ե (5)։

48 Տե՛ս ՄՄ № 2966, էջ 87բ—89բ և նրանից Ա. Տեր-Միքէլյանի հրատարակածը՝ Ս ա մ-վ ե լ Ա ն ե ց ի, էջ 272—277։ Յանկի մի այլ հրատարակություն տե՛ս Ն. Պողարյան, Սայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատ. Է. Նրուսաղէմ, 1974, էջ 441—452։ Ժամանակի ընթացքում Դրասխանակերտցու ցանկը փոփոխություններ է կրել. դիտելով հանդերձ, որ այն ավելի նախնական տեսք ունի ՄՄ № 579 (1276 և 1279 թթ, էջ 73բ—76բ) ձեռագրում, օգտագործում ենք Ա. Տեր-Միքէլյանի տպագրածի հիմքը, որովհետև այդ ցանկի ուսումնասիրումը մեր խնդրից դուրս է։

49 Տե՛ս ՄՄ № 2966, էջ 87բ, հմմտ. Ս ա մ վ ե լ Ա ն ե ց ի, էջ 272—273։

50 Զուգահրմած հատվածների անճշտությունները (հիմնականում գահակալության տարեքանակների) և անհամապատասխանությունները չենք քննարկի։

լոյ և ի հոգևոր աշխատութեանց և ջանից, Յոյնք և ամենայն յիտալիայ և Ասորեստան, Հայք և Վիրք, և Աղուանք առ հասարակ ի միասին, նդովեալ զժողովն Քաղկեդոնի և զՏումարն Լևոնի, ի միակարգ միակամութեամբ խոստովանեցին զուղղափառ հաւատոյ դաւանութիւնն առաքելական եկեղեցւոյ՝ ի ժամանակս Զենոնի բարեպաշտ թագաւորազն Հռոմայ:

ԻԳ. Տէր ներսէս ի գաւառէ Բագրեւանդայ, ի գեղջէ Աշտարակոյ, ամս Թ (9):

ԻԱ. Տէր նէրսէս ի Բագրեւանդայ, ի գեղջէ Աշտարակաց, ամս Թ (9): Սալ արար ժողով ի Դվին՝ հրամանաւ արքային Պարսից, վասն բաժանման ի Յունաց, և զտօն Մենդեանն և Մկրտութեանն ի միում աւուր ասաց առնել, ասելով, թէ որպէս Քրիստոս Աստուած և մարդ էր միաւորեալ, միաւոր պարտ է առնել զՄնունդն և զՄկրտութիւնն ի միում աւուր, և ոչ տօնել յայլ և յայլ օր: Եւ յաւել յԵրեքսրբեանն զխաչեցարն և բաժանեցաւ ի Յունաց: Եւ յայս ժողովոյս Վիրք և Զորք Հայք ի բաց կացին ի միաբանութենէ Հայոց, և Սիւնիք ևս, և յետոյ դարձեալ միաբանեցան, և արգել ոչ գնալ յԵրուսաղէմ:

ԼԲ. Տէր Եղր ի գաւառէ Նգա, ի գեղջէ Փառածնակերտէ, սնեալ ի տան կաթուղիկոսարանի, ամս Ժ (10):

ԻԸ. Տէր սուրբ Եղր ի Նգեայ, ի գեղջէ Փառածնակերտայ, սնեալ ի տան կաթուղիկոսարանին, ամս Ժ (10): Առ սովաւ եղև ժողով ի Կարնո քաղաք, զոր արար կայսր Հերակլ, կոչեալ զկաթուղիկոսն Հայոց զԵղր և զԵպիսկոպոսունսն և զիշխանսն Հայոց, և բաղում իմաստասէրս ի Յունաց, և ամսօրեայ քննութեամբ տրամաբանեալ ընդ միմեանս, ապալ հաւանեալ նոցա Եղր, բոլոր Եպիսկոպոսօք և իշխանօքն Հայոց միաբան եղեն, զժողովն Դնայ նդովիւք շափ ի բաց մերժեցին, զՄնունդն և զՄկրտութիւնն դարձեալ բաժանեցին և, զխաչեցարն յԵրեքսրբենէն ի բաց հանելով, ի դէմս Երրորդութեանն եղին, ասելով. «Հայր և Որդի և Սուրբ Հոգի,

ողորմալ մեղ», զսուրբ ժողովն Քաղկեդոնի և զկանոնադրութիւն նոցա համապատիւ սուրբ ժողովոցն ընդունեցան: Եւ այսմ հակառակեցաւ Յոհան Մարագոմեցին և, աքսորեալ, ընդհերձուածօղսն կարգեցաւ նշովիւք:

Ինչպես տեսնում ենք, համընկնումները բառացի են⁵¹, իսկ տարբերությունները վերաբերում են դավանական խնդիրներին: Հասկանալի է, որ ինչպես Լամբրոնացին և ապա Կեսարացին, այնպես էլ վերջինիս հրավիրած ժողովների մասնակիցները, կամա թե ակամա սլետք է բացատրեին հայ եկեղեցու բյուզանդական և հոռմեական եկեղեցիներին պատմականորեն միակամ լինելը, դրանում մեղադրելով Ներսես Բ Բագրևանդցուն, Մովսես Բ Եղվարդեցուն, Հովհաննես Օձնեցուն և ուրիշներին: Միաժամանակ, իրենց կաթողիկոսականությանն արդարացնելու համար, լիաբերան պետք է փառաբանեին այն կաթողիկոսներին, որոնք ժամանակի և հանգամանքների անհրաժեշտությամբ այս կամ այն շափով տուրք են տվել քաղկեդոնականությանը՝ եզր Փառսթնուկերացուն և նրա հաջորդ հինգ կաթողիկոսներին, Վահան Ա Սյունեցուն, Գրիգոր Գ Պահլավունուն, Ներսես Դ Շնորհալուն, Գրիգոր Դ Տղային:

Այժմ հնարավոր եղրակացությունը պարզ է.

XII դարի երկրորդ կեսի հայ-բյուզանդական, իսկ Լևոն մեծի թագադրմանը (1198) նախորդող շրջանում նաև հայ-եվրոպական քաղաքական-եկեղեցական հարաբերությունների և դեսպանադնացությունների աննախադեպ աշխուժության ժամանակաշրջանում, հավանաբար, անհրաժեշտ է եղել ունենալ կաթողիկոսների հաջորդական շարադրանքի մի փաստաթուղթ, որը պետք է սպացուցեր տիեզերական եկեղեցու (ի դեմս բյուզանդականի և հոռմեականի) հետ հայ եկեղեցու միաբան լինելը: Այդ ցանկ-փաստաթղթի կազմումը հանձնարարվել է Ներսես Լամբրոնացուն⁵², Վերջինս վերցրել է Դրասխանականերացու արդեն պատրաստի ցանկը, այն խմբագրել ըստ իր և իր ժամանակի տիրող մտայնության և ներկայացրել Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին:

Հետագայում Կոստանդին Կեսարացին կաթողիկոսարանի դիվանում կամ մի այլ տեղ գտել է այդ ցանկը, Գրիգոր Տղայի հաջորդ վեց կաթողիկոսների մասին ավելացրել է մի սողանոց համառոտ հաղորդումներ, ավելի մանրամասն գրել Ստեփաննոս Դ Հոռմկլայեցու և իր նախորդ Գրիգոր Անավարդեցու մասին, ապա՝ կաթողիկոսացանկը կցել իր կամ իր շրջապատողների խմբագրած հայ-լատին ծիսարանին, որ ստեղծվել էր Մաշտոց Եղվարդեցու կազմած հայ սովանդական և Ներսես Լամբրոնացու թարգմանած լատին մաշտոցների միակցմամբ: Այս նոր ծիսագիրքը հետագայում ստացել է «Սսեցւոց մաշտոց» անունը, իսկ նրանից մասնատված ձեռնադրության մաշտոցը՝ «Սսի Հայր մաշտոց»: Առաջինի հետ ցանկն ընդօրինակվել է և մեղ հասել մի քանի ձեռագրով:

⁵¹ Նմանությունների պատճառով Դրասխանականերացու ցանկի մի պակասավոր օրինակ (ՄՍՂ № 8252, էջ 218ա—218բ) նույնիսկ վերագրվել է Պալիանենցին (տե՛ս ՅԶՄՄ, Բ, էջ 707):

⁵² Չենք կարող չհավատալ Լամբրոնացուց մոտ 100—110 տարի հետո հանդես եկած Կոստանդին Կեսարացի կաթողիկոսին, որն անվերապահորեն ցանկի հեղինակ է հայտարարում Տարսուսի արքեպիսկոպոս Ներսեսին: Այդ տեղեկությունը նա կարող էր վերցրած լինել իրեն շատ մատչելի կաթողիկոսարանի դիվանի որևէ փաստաթղթից:

Նույն. արդեն խմբագրված, ցանկին Կեսարացու մի ժամանակակից կցել է մեզ արդեն հայտնի Անավարդեցու թուղթը և Սսի 1307 թ. ու Ադանայի 1316 թ. կաթողիկոսական ժողովների կանոնները: Նա այդպիսով ստեղծել է մի նոր երկ: Վերջինիս 1366 թ. Սսում գրված մի օրինակ և դեռ է Գալանոսի ձեռքին⁵³, որը նա ամբողջությամբ տպագրել է: Նույնը կամ ուրիշ մի օրինակ կցվել է Երանոս Օսլավիացու ժամանակագրության՝ Ներսես Պալիանենցի թարգմանության ձեռագրերից մեկին, որից և ծագում են ՄՄ №№ 2037 և 7841 գրչագրերը:

ОБ ОДНОЙ ХРОНОЛОГИЧЕСКОЙ ТАБЛИЦЕ,
ПРИПИСЫВАЕМОЙ НЕРСЕСУ ПАЛИАНЕНЦУ

Ю. А. ВАРДАНЯН

(Резюме)

В качестве материала для уточнений хронологической основы истории средневековой Армении, наряду с историографическими трудами, большое значение имеют также довольно часто встречающиеся в рукописях каталоги имен и времен правлений армянских католиков. Среди них особого внимания заслуживают два каталога, во многом отличающиеся друг от друга и приписываемые знаменитому униату XIV в. Нерсесу Палианенцу. Они в основном хранятся вместе со списками «Хроники» Мартина Оппавского (XIII в.), переведенной с латинского языка Палианенцем в 1348—1351 гг. Учитывая данные рукописи—оригинала перевода «Хроники» Мартина (рук. № 1578 библиотеки конгрегации армянских Мхитаристов в Венеции) и ультракатолические взгляды Палианенца, мы приходим к выводу, что краткий каталог действительно принадлежит последнему. Исходя из политических и церковно-литературных тенденций Киликийской Армении начала XIV в. и с привлечением прямых и косвенных источниковедческих данных нам удалось выяснить, что пространная редакция каталога была создана в последней четверти XII в. Нерсесом Ламбронати на основе однородного произведения историка X в. Ованнеса Драсханакертци. Каталог получил окончательную форму в начале XIV в. Последний его редактор—современник католика Константина Кесараци (1307—1322)—присоединил к каталогу послание католика Григора Анаварзеци (1293—1307) к царю Хетуму II (1389—1305) и акты церковных соборов в Сисе (1307 г.) и Адане (1316 г.). Эта редакция датируется 1316—1322 годами.

53 Տե՛ս Գալանոս, Ա, էջ 455: